ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 18 >> հունիսի 2013թվականի N 61 -Ա

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ <<ԱՆԻ ՓՈՂԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ, 15-րդ, 21-րդ կետերով, 52-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 2-րդ կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 71-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 75-րդ հոդվածով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Ստեղծել Գյումրու քաղաքապետարանի <<Անի փողային նվագախումբ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:
2. Հաստատել Գյումրու քաղաքապետարանի <<Անի փողային նվագախումբ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի:
3. Հաստատել Գյումրու քաղաքապետարանի <<Անի փողային նվագախումբ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող գույքի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի:
5. Հաստատել Գյումրու քաղաքապետարանի <<Անի փողային նվագախումբ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը՝ համաձայն N 3 հավելվածի:
6. Համաձայնություն տալ Գյումրու քաղաքապետարանի <<Անի փողային նվագախումբ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակելու Գառնիկ Մեժլումյանին (անձնագիր՝ AC03616525, տրված՝ 20.08.1998թ, ՀՀ Ոստիկանության 016-ի կողմից, վավերականության ժամկետը երկարաձգված՝ մինչև 20.08.2013թ, սոց.քարտ.՝ 2409560134, հաշվառված՝ ք.Գյումրի, Մուսայելյան 38շ., բն 25):
7. Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 22-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 170-Ա որոշման 5-րդ կետով հաստատված N 4 հավելվածով հաստատված Գյումրու քաղաքապետարանի <<Ա.Բրուտյանի անվան թիվ 4 երաժշտական դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակից հանել 11-րդ, 12-րդ և 13-րդ տողերը, իսկ <<ԸՆԴԱՄԵՆԸ>> տողում՝ <<69,1>> թիվը փոխարինել <<46.1 >> թվով, <<3219179>> թիվը փոխարինել <<2229179>> թվով, <<3973580>> թիվը փոխարինել <<2731200>> թվով, իսկ <<47682960>> թիվը փոխարինել <<32774400>> թվով:
8. Դիմել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տարածքային բաժին՝ Գյումրու քաղաքապետարանի <<Անի փողային նվագախումբ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը օրենքով սահմանված կարգով գրանցելու համար:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ (11) Դեմ(0) Ձեռնպահ(0)

Ա.Բաղրամյան_____

Լ.Բարսեղյան _____

Մ.Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է.Մկրտչյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ